

Գ. ՏԵՏԵՍԱԿԱՆ ԿԱՆՈՆԻ

Վարդարութիւնը և մեր կարօտ ազգին իրաւունքը կը պահանջեն որ վարժարանիս մատակարարութիւնն ըլլայ ամենայն կարելի խնայութեամբ և ըզգուշութեամբ, և միանգամայն բարերարին վեհանձնութեանը համեմատ վայելցութեամբ. ուստի մեծ ջանքով կը նայուի որ վարժարանիս ամէն բաներուն մէջ փայլին՝ զգուշաւոր չափաւորութեան հետ մէկտեղ՝ մաքրութիւն, դիւրութիւն ու լաւութիւն :

Վարժարանիս շենքին ընդարձակութիւնը, խաղաղաւէտ զիրքը, առողջարար օդը, և բարեկարգ կերպով կատարուած ծառայութիւնները այս վախճանիս ինչպէս որ պէտք է համաձայն են :

Վակերտաց ձերմակեղէնը կամ ներքին հագուստները շաբաթը երկու անգամ կը փոխուին, մանաւանդ ամառը : Վարժաքին հագուստները երկու տեսակ են՝ երկուքն ալ միաձեւ ու միագոյն . մէկը չուխայէ՝ որ դարրոցէն դուրս ու հանդիսի օրեր կը հագնին, մէկալը գունաւոր կտաւէ՝ ներսը հագնելու համար, որ ատեն ատեն ալ կը լրւացուի :

Լերակուրներն են մննդարար, փոփոխ, բաւական չափով, մնաքուր ու վայելցապէս պատրաստուած :

Վովորական տօնի և զբօսանաց օրերէն զատ՝ հարկաւոր տեսնուած տարին աշակերտները մէկ երկու շաբաթ ալ զիւղագնացութեամբ օդափոխութիւն կ'ընեն ու կը հանգչին :

Հիւանդութիւն մը որ պատահի մէկուն, վարժարանիս յատուկ բժիշկը կը կանչուի ու շուտ մը պէտք եղած դարմանները կ'ըլլուին :

ԱՇԱԿԵՐՏԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ
ՊԱՑՄԱՆՆԵՐԸ

Ա. Վակերտաց ընտրութիւնը կ'ըլլայ վարժարանիս վերատեսչին և կամ անոր Վարժակալաց ձեռքովը ըստ ժամանակին և ըստ որոշեալ թուղին . ուստի ատենէ դուրս և առանց օրինաւոր ընտրութեան զրկուած տղան ընդունելլ ըլլար :

Բ. Վարժարանս մտնող տղայոց տարիքը տասաւուերկուքէն պակաս ու տասնըհինկէն աւելի պիտի ըլլայ :

Գ. Վարժնով ակար ու հիւանդոտ, կամ բարքովը ախտաւոր ու մոլի տղան ընդունուիր . անոր համար մկրտութեն վկայականին հետ կը պահանջուին ամէն տղէ նաև ծաղիկ ու վարդածաղիկ համած ըլլալուն և բարուց լաւութեանը համար վկայագիրներ :

Դ. Ծղուն ծնողացը, կամ որք տղուն մօտաւոր ազգականացը աղքատ ու չքաւոր ըլլալուն համար վկայական մը կը պահանջուի անոնց արուեստակիցներէն:

Ե. Երկու եղբարք ՚ի միասին չեն ընդունուիր, բայց եթէ մէկուն տարեկան ծախսը վճարուելով :

Զ. Վտենէ դուրս իր որդին ետ կանչողը՝ պարտական է գոնէ ամիս մը առաջ վարժարանիս վերատեսչին իմացընելու և ձամբուն ծախսը վճարելու :

Է. Երբոր տղայ մը ստահակ ու անուղղայ է, վարժարանիս վերատեսուց ամիս մը կամ տասնըհինգ օր առաջ կ'իմացընէ անոր ծնողացը, և եթէ հարկ ըլլայ՝ առանց անոնց հաւանութեանը սպասելու ետ կը ձամբէ տղան : — Վոյն պէս կ'ընէ երբոր տղայ մը հիւանդոտ ըլլայ . բայց ան ատեն բժշկին վկայագիրն ալ ձեռքը կու տայ :

Ծարուստի զաւակը իրաւունք չունի աղքատաց բարիքը ձրի վայելելու, ուստի կարողութեանը համեմատ պիտի վճարէ ամբողջ թոշակ, կամ կեսը, կամ քառորդը, և կամ գէթ ձամբուն այսինքն երթալու և գալու ծախքը, և հարկաւոր ձերմակեղէնն ու մանր պի-

տոյքը : — Առ ասոնք վճարելով ալ՝ աղքատ տղոց հաւասար է իր արտաքին հագուստը, կերակուրը, բնակարանը և ամէն վայելը, և ոչ աւելի :

Թ . Տղու մը ամերող տարեկան թոշակն է՝ ձամբու ծախքէն դուրս՝ 2000 ֆրանք, կես թոշակը 1000, քառորդը 500 :

Ժ . Հարկաւոր սեպուած Ճերմակեղէնն ու մանր պիտոյքը ասոնք են .

- 12 Շապիկ .
- 8 Արտիք .
- 6 Բաճկոն .
- 6 Աւան .
- 4 Բարձի երես .
- 12 զյոգ Պառապայ .
- 12 Ծաշկինակ Ճերմակ .
- 12 Ծաշկինակ գունաւոր .
- 6 Երեսսրբիչ .
- 4 Պիշերնոց .
- 2 զյոգ Ոտքի աման .
- 1 Անտր .
- 1 Արձին շուխայի .
- 1 Արձին գլխոյ .
- 1 Արձին ակուայի .
- 1 Ո՛կրատ .
- 1 Կտրոց .
- 1 Օմելին .

ԺԱ . Ծառշակին կէսը կամ վեցամսականը (ինչպէս նաև ձամբուն ծախքը) կանխիկ պիտի վճարուի՝ տղուն ձամբայ ելած ատենը . վեց ամիսը լմբնալուն պէս պիտի վճարուի երկրորդ վեցամսականը :

ԺԲ . Ոյնէ որ մէկը սահմանեալ ժամանակէն ամիս մը ետքը չչատուցանէ տղուն թոշակը, վարժարանիս վերատեսուցը փոխանակագիր (Դուշա) մը կ'ընէ ծնողացը վրայ . եթէ փոխանակագիրը ետ դառնայ, տղան ալ իսկոյն ծնողացը կը դարձուի :

ԺԳ . Եթէ տղայ մը վարժարանիս մէջ դաս տրուած ուսմունքէն դուրս բան մը ուղէ սորպիլ, օրինակի համար՝ երաժշտութիւն, կամ նոր լեզու մը, կամ արուեստ մը, անոր համար պէտք եղած ծախքը զատ պիտի վճարէ :

ԺԴ . Տղոց քովը ստակ ամենեին

չգտնուիր . և եթէ ծնողք ուղեն քիչ մը ստակ զրկել որ տղուն համար գըրքեր և կամ ուրիշ մանր բաներ աւնուին, ստակը վերակացուաց քովը կը պահուի մասնաւոր հաշուեղքի մէջ, ու տղուն պէտք եղածը անոնք կը գնեն : — Ի, մանապէս թէ որ ծնողք կերակրեղէն կամ անուշեղէն զրկեն իրենց տղուն, վերակացուները անկէց բոլոր տղոց ալ բաժին հանել կուտան :

ԺԵ . Տղոց գրած և ընդունած նամակները ձրի կ'երթան ու կուգան՝ երբոր Պօլսոյ Վարծակալին ձեռքովը խըրկուին . բայց երբոր ծնողք իրենց թուղթը զատ ձգեն թղթատունը՝ ձամբուն ծախքը պիտի վճարեն :

ՂԱ . Ե ահա մեր տուած դաստիարակութեան ընդհանուր հիմը և անյեղի սկզբունքը Ուրատեան վարժարանիս մէջ, և ասոնց մեր կողմանէ ամենայն ձշութեամբ պահուելուն վկայ և երաշխաւոր ունինք խիստ շատ օտար և ազգային պատուաւոր և անաշառ անձինքն՝ որ աչօք տեսեր ու քններ են վարժարանիս ընթացքը, և կամ դիտեր են ասոր գովելի աշակերտներուն վարմունքը :

ՂԱՆՔ հիմա վաժարանիս դարձաւոր և մնացող սաներուն վիճակը մէկ երկու խօսքով բացատրելու :

Դարձաւորները վեց տարի է որ վարժարանիս մէջ կը դաստիարակուեին, և գրեթէ ամէնքն ալ անոնք են՝ որ անցած տարի իրենց հայրենիքը դարձող աշակերտներէն աւելի մանկահասակ ըլլալով՝ կարօտ էին գոնէ տարի մըն ալ աւելի կենալու և բան սովորելու : Դանք այս տարուանս մէջ ոչ միայն նախընթաց տարիներուն ուսմունքները, լեզուներն ու գեղարուեատները կատարելագործելու աշխատեցան, այլ և մասնաւոր կերպով Դրաւագիտութեան, Արածառականութեան, Բնական գիտութեանց, Ամաստասիրութեան, և զանազան ազգային և օտար հմտութեանց ետևէ եղան . ոմանք ալ աւելի մոտադրութիւն ըլլին և աւելի ժամանակ անցուցին այն

գեղարդւեստից՝ որոնց յարմարութիւն
ու փափաք ունենալին յայտնի էր, այս
ինքն ճարտարապետութեան, նկարչու-
թեան, վիմագրութեան, մանրանկարի
և երաժշտութեան, մէկն ալ զրակազ-
մութեան արուեստին։

Երաւագիտութեան մէջ իրենց քա-
ջութեան աստիճանովը գովեստից ար-
ժանի եղան ասոնք։

- Ա.** { ՎԻՉԵՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ .
- { ԳԵՈՐԳ ԻՆՃԻՃԵԱՆ .
- { ՅՈՎՃԱՆՆԷՍ ՀԻՒՐՄԻՉԵԱՆ .
- Բ.** { ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆ .
- { ԿՈՄԻՏԱՍ ՄԻՒԱՍԵԱՆ .
- Գ.** { ՊՕՂՈՍ ԼԱԶ-ՅՈՎԱԿԵՓԵԱՆ .
- { ԳԱԲՐԻԵԼ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ .

Ա աճաւականութեան կամ հաշուե-
տումնար բռնելու արուեստին մէջ ուրիշ-
ներէն աւելի մտադիր ու յաջողակ տես-
նուեցան

- Ա.** { ՎԻՉԵՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ .
- { ՅՈՎՃԱՆՆԷՍ ՀԻՒՐՄԻՉԵԱՆ .
- { ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆ .
- Բ.** { ԳԵՈՐԳ ԻՆՃԻՃԵԱՆ .
- { ՅՈՎՈՒԹԻՒՆ ԵՐԱՄԵԱՆ .
- { ԿՈՄԻՏԱՍ ՄԻՒԱՍԵԱՆ .
- Գ.** { ՊՕՂՈՍ ԼԱԶ-ՅՈՎԱԿԵՓԵԱՆ .
- { ԳԱԲՐԻԵԼ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ .

Բնական զիտութեանց մասնաւոր
փոյթ և ջանք ունեցողներն եղան

- Ա.** { ՅՈՎՃԱՆՆԷՍ ՀԻՒՐՄԻՉԵԱՆ .
- { ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՐԱՄԵԱՆ .
- Բ.** { ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆ .
- Գ.** { ԿՈՄԻՏԱՍ ՄԻՒԱՍԵԱՆ .

Չափաբանական զիտութեանց, այս
ինքն Խուանկիւնաչափութեան, Հան-
րահաշուի, Շարժաբանութեան, և
ասոնց վերաբերեալ ուսմանց մէջ յա-
ջողութիւն և մեծ յառաջադիմութիւն
երեւեցուց

ՅԱԿՈԲ ՓԱՓԱԶԵԱՆ .

Ուրուագրութեան և վիմագրութեան
մէջ առանձին,

ԱՆՏՈՆ ԳԱՆԹԱՐԵԱՆ .

Ա անրամնկարի մէջ

ՅՈՎՃԻՓ ԵՍԱՑԵԱՆ .

Չայնական և գործիական Խրաժը-
տութեան մէջ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՐԱՄԵԱՆ .

ՄԱՆԱՍԻ ՄԱՆԱՍԵԱՆ .

Դարտարապետութեան մէջ

ՊՈՂՈՍ ԼԱԶ-ՅՈՎԱԿԵՓԵԱՆ .

ԳԵՈՐԳ ԻՆՃԻՃԵԱՆ .

Գրակազմութեան արուեստին մէջ
ՌՈՒԲԵՆ ՓԱՌԼԱՏԵԱՆ .

Խակ վարժարանիս մէջ մնացող աշա-
կերտները, որ Խրբորդ դաս կը համա-
րուին և առ այժմ երեսունի շափ կան,
ամէնքն ալ նորեկ են, վասն զի միայն
վեցը մէկ տարիին քիչ մը աւելի է որ
հոս են, մէկանոնք հազիւթէ ինն ամիս
կայ որ եկած են, և մեծ մասը տասնէն
ինչուան տասուիրեք տարեկան։

Պանց այս տարի սովորած ու քննուած
ուսմունքը զրեթէ ամէնն ալ անսնք են
որ վարժարանիս կանոնացը նայելով
պարտական էին դեռ հոս չեկած զիտ-
նալու, և շատ ցաւալի բան է որ ժա-
մանակիս պարագայներէն տոխուած
ենք մինչև ցայժմնաև այսպիսի սկըզ-
բնավարժ տղաք ընդունելու այս վար-
ժարանս։ Ասկայն կինանք գննէ ասով
միիթարուիլ որ այժմու դեռահասակ
աշակերտաց մեծ մասը սակաւ ժամա-
նակի մէջ կարծուածէն աւելի յառաջա-
դիմութիւն երեցուցին ամէն բանի
կողմանէ։ Խրենց սովորած նիւթերուն
բազմութիւնն ալ կը վկայէ թէ արժանի
են այս գովեստին։ մասնաւոր կերպով
արժանաւորութիւն ունեցողներն ալ ա-
ռաջիկայ պատկերին մէջ աստիճան աս-
տիճան շարտած են։ Հյուսանք որ գալ
տարի հանդիսաւոր պարզեաբաշխու-
թեան ատեն միցանակները թէ ասոնք
ընդունին և թէ ուրիշ շատերը, և ու-
րախացընեն իրենց ծնողքն ու դաստիա-
րակները։